

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի (2014-15  
ուստարվա)**

**10.07.2015թ.**

ԵՊՀ ԻՄ-ի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը մասնաճյուղում իրականացնում է որակի ներքին ապահովման գործընթացը՝ առաջնորդվելով կրթության որակի բնագավառում մասնաճյուղի ընտրած քաղաքականությամբ և բաժնի՝ 2014-15 ուստարվա աշխատանքային պլանով, որը կազմվել է համաձայն մասնաճյուղի զարգացման 2011-15 ռազմավարական ծրագրի պլան-ժամանակացույցից բխող կարճաժամկետ պլանի: Բաժնի աշխատակիցները, համաձայն իրենց գործառույթների, իրականացրել են 2014-15 ուստարվա պլանով սահմանված աշխատանքները:

ՄԿՈԱ բաժինն իր առջև դրված աշխատանքներն իրականացրել է համապատասխան ժամկետներում, մի շարք գործընթացներ գտնվում են կատարման փուլում, նրանք իրենց բնույթով պարբերաբար իրականացվող են և կատարվում են՝ համաձայն ընթացիկ պահանջների: Պլանով նախատեսված աշխատանքներից բացի բաժինը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է պլանից դուրս անհետաձգելի և անհրաժեշտ մի շարք աշխատանքներ, որոնք ավելացրել են բաժնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը:

Սերտ համագործակցելով տնօրենի խորհրդական Ա.Մակարյանի հետ՝ բաժինը աշխատել է թիմով, ընթացիկ աշխատանքների **ամենօրյա և ամենշաբաթյա** պլանավորմամբ: Աշխատակիցների կողմից յուրաքանչյուր օրվա վերջում կատարվել է ընթացիկ օրվա աշխատանքների ամփոփում և հաջորդ օրվա աշխատանքների պլանավորում: ՄԿՈԱ բաժնի ամբողջ գործունեությունն ամրագրված է բաժնի նիստերի արձանագրություններում և համապատասխան փաստաթղթերում:

Բաժնի աշխատակիցները կարևորում են մասնաճյուղում որակի ներքին ապահովմանը միտված գործընթացների արդյունավետ իրականացումը և իրենց

մշտական խորհրդատվությամբ աջակցում են բոլոր ենթակառուցվածքներին՝ ուղղորդելով նրանց գործընթացներն իրականացնելու որակի ապահովման շրջափուլով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում), առաջնորդվելու համապատասխան քաղաքականություններով, կանոնակարգերով և ընթացակարգերով:

Նշենք, որ բաժնի 5 աշխատակիցներ 2013-14 թթ. մասնակցել են «Մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգերի մշակում և բարելավում» թեմայով եռափուլ դասընթացներին: Այդ դասընթացները աշխատակիցներին տվեցին կրթության որակի ապահովման նկատմամբ նորովի մտածողություն և գործելու նոր կարողություններ, փորձի փոխանակում, նոր, հետաքրքիր մտքեր ու գաղափարներ: Բաժնի 3 աշխատակիցներ (Մ.Ճաղարյան, Գ.Ավետիսյան, Ա.Խաչատրյան) այդ դասընթացներին ակտիվ մասնակցելու համար 2014թ. դեկտեմբերին ստացել են Որակի ապահովման գործընթացի աջակցի հավաստագիր:

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն իրականացրել է տարբեր բնույթի բազում գործընթացներ՝ խորհրդատվություններ, փաստաթղթային հիմքերի համալրումներ և ներդրում, հարցումներ, վերլուծություններ:

1. Բաժինը մշակել և Գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացրել ԵՊՀ ԻՄ-ի ներքին աուդիտի անցկացման կարգը, որը ներկայացնում է մասնաճյուղում ներքին աուդիտի անցկացման նպատակը, պլանավորման և իրականացման սկզբունքները, ներքին աուդիտի հետ կապված փաստաթղթերի կազմման և պահպանման առանձնահատկությունները: Այն մասնաճյուղի գործունեության արդյունավետությանը և բարելավմանը միտված կարևոր կարգ է, որը կնպաստի մասնաճյուղում լիարժեք խորհրդատվության ապահովմանը և աշխատանքների լիարժեք պլանավորմանն ու իրականացմանը: Կարգն ընդգրկում է ներքին աուդիտ անցկացնող հանձնաժողովի համապատասխան գործընթացների իրականացման և ամրակայման բազմաթիվ ձևաթղթեր:

2. Համաձայն նախապես մշակված ժամանակացույցի՝ 2014թ. սեպտեմբերին բաժինը մասնաճյուղի դասախոսների համար իրականացրել է դասընթացների

փաթեթների կառուցվածքային համապատասխանության վերաբերյալ խորհրդատվություն: Մշակվել են այդ գործընթացի նպատակային կազմակերպման և անցկացման համար անհրաժեշտ ցուցակներ և մի շարք ձևաթղթեր, այդ գործընթացի իրականացման արդյունքների վերաբերյալ կազմվել է հաշվետվություն և ներկայացվել տնօրենությանը:

3. Ըստ ԵՊՀ ԻՄ-ի՝ 2011-15 զարգացման ռազմավարական ծրագրի 2011-2014 թթ. նախատեսված գործողությունների կատարման մասին մասնաճյուղի ստորաբաժանումների ներկայացրած հաշվետվությունների՝ 2014թ. սեպտեմբերի 1-ից մինչև հոկտեմբերի 17-ը բաժինը նախապատրաստել և ԳԽ-ում ներկայացրել է ԵՊՀ ԻՄ-ի՝ 2011-2015 զարգացման ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի մասին հաշվետվությունը: 2015թ. հունվարին տպագրության է նախապատրաստել ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական ծրագրի՝ 2011-14թթ. գործողությունների կատարման ամփոփ զեկույցը:

4. 2014թ. նոյեմբեր ամսին բաժինը մասնաճյուղի բոլոր ստորաբաժանումների հետ համատեղ կազմել է «ԵՊՀ ԻՄ-ի գործունեությունը 2013-14 ուստարում» հաշվետվությունը, որը ներկայացվել է Երևանի պետական համալսարանի «ԵՊՀ գործունեությունը 2013-14 ուսումնական տարում» ռեկտորի հաշվետվությունում: Իսկ 2015թ. հունվարին բաժինը տպագրության է նախապատրաստել մասնաճյուղի՝ 2013-14 ուստարվա գործունեության համալրված և ընդարձակ հաշվետվությունը: Բաժինը, աշխատելով թիմով, մանրամասն ուսումնասիրել է մասնաճյուղի գործունեությունը, ապա մասնաճյուղի ուսումնակրթական գործունեությունը ներկայացրել հետևյալ հիմնական ուղղություններով՝ որակի ապահովում, ուսումնական գործընթաց, համագործակցություն, տեղեկատվական համակարգեր, տեղեկատվական ռեսուրսների զարգացում, գրադարան, հասարակայնության հետ կապեր, ուսանողական կառույցներ, աշխատանք ուսանողների և շրջանավարտների հետ:

5. Ըստ պլանի բաժինն իրականացրել է մասնաճյուղում ներդրված և գործող մի շարք հարցաշարերի վերանայում: Հիմնավորվել է այդ հարցաշարերի վերանայման անհրաժեշտությունը, հստակեցվել են թիրախային խմբերը, հարցաշարի

նպատակը և կիրառումը ինքնավերլուծության չափանիշներում, նշվել են հարցման տվյալների վերլուծության արդյունքում գործընթացների հետագա բարելավման հնարավորությունները: Կազմել և հաստատվել են նաև մի շարք նոր **հացաշաքեր:** Ապա բոլոր հարցումների իրականացման համար գրվել են համապատասխան **կանոնակարգեր, հարցման գործիքի անձնագրեր:**

	Հարցման կանոնակարգ	Հարցաթերթեր (9 հատ)	Հիմքը	Նշումներ
1	ԵՊՀ ԻՄ-ում <u>ստացած կրթությունից</u> շրջանավարտների բավարարվածության գնահատում	<ul style="list-style-type: none"> <li>ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից <u>շրջանավարտների</u> բավարարվածության գնահատման</li> </ul>	ԵՊՀ ԻՄ ԳԽ-ի 02.09.2010թ. նիստում	ԵՊՀ ԻՄ-ում <u>ստացած կրթությունից</u> շրջանավարտների բավարարվածության գնահատում
2	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի <u>շրջանավարտների</u> վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրություն	<ul style="list-style-type: none"> <li>ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ <u>արտաքին շահակիցների</u> կարծիքի ուսումնասիրության</li> </ul>	ԵՊՀ ԻՄ ԳԽ-ի 18.04.2015թ. նիստում	<u>վերանայվել</u> ՝ հարցաշարը <u>մշակվել է</u> ՝ հարցման կանոնակարգը հարցման գործիքի անձնագիրը
3	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի <u>պրակտիկայի կազմակերպման</u> արդյունավետության գնահատման	<ul style="list-style-type: none"> <li>ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ <u>արտաքին շահակիցների</u> կարծիքի ուսումնասիրության</li> <li>ԵՊՀ ԻՄ-ի կողմից կազմակերպված պրակտիկայի <u>ուսանողական</u> գնահատման</li> </ul>	ԵՊՀ ԻՄ ԳԽ-ի 18.04.2015թ. նիստում	<u>վերանայվել</u> ՝ հարցաշարը
4	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից <u>ներքին շահակիցների</u> բավարարվածության ուսումնասիրության	<ul style="list-style-type: none"> <li>ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից <u>պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի</u> բավարարվածության</li> </ul>	ԵՊՀ ԻՄ ԳԽ-ի 18.04.2015թ. նիստում	<u>մշակվել է</u> ՝ հարցման կանոնակարգը, 2 հարցաշարերը, 2 հարցումների գործիքի

		<p>ուսումնասիրության</p> <ul style="list-style-type: none"> <li>ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից <b><u>ուսանողների</u></b> բավարարվածության ուսումնասիրության</li> </ul>		անձնագիրը,
5	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի <b><u>ուսանողների գնահատման</u></b> վերաբերյալ	<ul style="list-style-type: none"> <li>ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ուսանողների գնահատման վերաբերյալ <b><u>ուսանողական</u></b></li> <li>ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ուսանողների գնահատման վերաբերյալ <b><u>դասախոսական</u></b></li> </ul>		<p><b><i>մշակվել է</i></b>՝ հարցման կանոնակարգը, 2 հարցաշարերը, 2 հարցումների գործիքի անձնագիրը,</p>

Հարցումը որակի ներքին ապահովման գործընթաց է: Մասնաճյուղը հաշվետու ժամանակահատվածում ՄԿՊԿ բաժնի, ֆակուլտետների դեկանատների և ամբիոնների աջակցությամբ իրականացրել է ինը հարցումներ, որոնց նպատակն է ուսումնասիրել ԵՊՀ ԻՄ-ի.

- շրջանավարտների և պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքը՝ ՄԿԾ հետագա բարելավման համար,
- աշխատանքային միջավայրից պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի բավարարվածությունը՝ գործունեության բարելավման ուղղությամբ առաջարկներ մշակելու համար,
- աշխատանքային միջավայրից ուսանողների բավարարվածությունը՝ գործունեության բարելավման ուղղությամբ առաջարկներ մշակելու համար,
- **ուսանողների և դասախոսների** կարծիքը մասնաճյուղում գործող ուսանողների գնահատման գործընթացի վերաբերյալ՝ ըստ կրթական վերջնարդյունքների ուսանողների գնահատման գործընթացի որակի բարելավման ուղղությամբ առաջարկներ մշակելու համար:

Այդ հարցումների միջոցով նպատակ ունենք լուծել մի շարք խնդիրներ, օրինակ՝ պարզել և գնահատել.

- արտաքին շահակիցների բավարարվածությունը մասնաճյուղի շրջանավարտների և պրակտիկանտ-ուսանողների մասնագիտական գիտելիքների մակարդակից և իմացությունից, գործնական և ընդհանրական կարողություններից, ստեղծագործական ունակություններից և ժամանակակից մեթոդների կիրառման հմտություններից,
- մասնաճյուղի շրջանավարտների մրցունակությունը աշխատաշուկայում,
- մասնաճյուղի շրջանավարտների ուժեղ և թույլ կողմերը,
- աշխատաշուկայում նոր մասնագիտությունների պահանջարկը,
- աշխատակիցների բավարարվածությունը մասնաճյուղի ռեսուրսներից ու ծառայություններից, ստորաբաժանումների գործունեությունից, էլեկտրոնային կայքից, ուսանողներից, ուսումնական գործընթացների կազմակերպումից, աշխատանքային միջավայրից,


- ուսանողների բավարարվածությունը մասնաճյուղի խորհրդատվական ծառայություններից, ռեսուրսներից ու ծառայություններից, ստորաբաժանումների գործունեությունից, ուսանողական կառույցներից, էլեկտրոնային կայքից,
- ուսանողի տեղեկացվածությունը կրթական վերջնարդյունքների գնահատման չափանիշներից և դասախոսների կողմից այդ չափանիշների պահպանման հնարավորությունները,
- ուսանողի կրթական վերջնարդյունքների գնահատման տարբեր ձևերի արդյունավետությունը, գնահատման օբյեկտիվությունն ու թափանցիկությունը, գրագողության դեմ պայքարի ձևերի արդյունավետությունը,
- ուսանողի տեղեկացվածությունը յուրաքանչյուր քննական գործընթացի ժամանակ իր գնահատականի ձևավորումից,
- ուսանողի բողոքարկումներին դասախոսների արձագանքելու, միավորի փոփոխություն կատարելու հնարավորության մասին,
- ուսանողների նախասիրությունները գնահատման առաջարկվող ձևերի վերաբերյալ:

6. Հարցումները կարևոր նշանակություն ունեն նաև կրթական ծրագրերի մշտադիտարկման ու վերանայման գործընթացում, ուսումնառության ու պրակտիկայի արդյունավետ կազմակերպման համար և հիմք են մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության համապատասխան չափորոշիչների վերլուծության համար: Բաժինը 2015թ. հունվարից ՈԻՄՎ-ի հետ համատեղ ըստ ժամանակացուցի իրականացրել է անհրաժեշտ հարցումները և կատարել հարցումների արդյունքների վերլուծություն: Այդ հարցումների մի մասի արդյունքները և վերլուծությունները տեղադրվել են մասնաճյուղի կայքի «Կրթության որակի կառավարում» բաժնի գործընթացներում, հարցումների մյուս մասի վերլուծությունները ընթացքի մեջ են, որովհետև պայմանավորված էին ավարտական քննությունների իրականացման ժամանակահատվածի հետ՝ շրջանավարտների բավարարվածության և ամփոփիչ ատեստավորման



հանձնաժողովի կազմում ներգրավված տարածաշրջանի գործատուների շրջանում համապատասխան հարցումների կազմակերպումով: Դրանց արդյունքները նույնպես կլուսաբանվեն կայքում, նաև բոլոր հարցումների վերլուծված արդյունքները կտրվեն ՈԻՄՎ-ին և համապատասխան ֆակուլտետներին՝ իրենց հետագա գործունեությունը պլանավորելու նպատակով: Բաժնի կողմից մշակվել է արտաքին և ներքին շահակիցների առաջարկություններից ու դիտողություններից կազմված փաթեթ, որը նույնպես կտրվի ֆակուլտետներին:


7. Բաժինը վերանայել է ԵՊՀ ԻՄ-ի որակի ներքին ապահովման կազմակերպական կառուցվածքի նախկին սխեման: Բաժնի բոլոր աշխատակիցների առաջարկությունների հիման վրա ձևավորվել և տնօրենի խորհրդական Ա.Մակարյանի հետ քննարկվել է կառուցվածքի նոր սխեման, որի մեջ ավելացվել են վերջերս ձևավորված Աուդիտի հանձնաժողովը, Կրթական ծրագրերի որակի ապահովման խմբերը, նախկին սխեմայի որոշ տարրեր խմբավորվել են, վերանայվել են նրանց միջև կապերը: Ապա ԵՊՀ ԻՄ-ի որակի ներքին ապահովման կազմակերպական կառուցվածքը ներկայացվել է Որակի կառավարման հանձնաժողովի հաստատմանը:



Բաժինը վերանայել է նաև մասնաձյուղի կազմակերպական կառուցվածքի

**ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌՈՒԹՎԱԾՔԸ**

«ՄԱՍՆԱՎԱԾ Է»  
ԵՆ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀԻՆԻ  
2019թ. «...» թիվ թվաթիվ  
ԳՆ ԼԱԽԱՎԱՆ ԽՄ ՏՆՈՐԵՆ



սխեման.

8. Բաժնի կողմից կազմվել է ամբիոնների և դեկանատների փաստաթղթերի կանոնակարգված ցանկը՝ անվանացանկը, այն համեմատվել է մասնաձյուղում նախկինում գործող անվանացանկերի հետ, կազմվել է այդ ցանկի վերջնական տարբերակը, որը տրվել է ֆակուլտետներին և ամբիոններին քննարկման համար: Այն հնարավորություն կտա ամբիոնների և դեկանատների գործավարությունը իրականացնել ավելի կանոնակարգված:

9. Կազմվել է ՄԿՈԱ բաժնի և մասնաձյուղի ենթակառուցվածքների միջև տեղեկատվության փոխանակումը կարգավորող սխեման: Նախնական տարբերակով կազմվել է ստորաբաժանումների կողմից տրամադրվելիք փաստաթղթերի ժամանակացույցը, որը կներկայացվի համապատասխան ստորաբաժանումների քննարկմանը: Սխեման նպատակ ունի համակարգելու մասնաձյուղի բոլոր ստորաբաժանումներից նախանշված ժամկետներում տեղեկատվության ստացումը, ներառում է տվյալ ստորաբաժանման անվանումը, տրամադրվելիք փաստաթղթերի անվանումը, դրանց ստացման

Ժամանակացույցը և համապատասխան ձևաթղթերը: Միեման կնպաստի ՄԿՈԱ բաժնի գործունեության առավել արդյունավետ կազմակերպմանը:

10. Բաժինը պլանավորել է ունենալ ԵՊՀ ԻՄ-ի որակի ներքին ապահովման ձեռնարկ, որում պետք է ներկայացված լինի մասնաճյուղի կրթության որակի ապահովման համակարգը: Ձեռնարկը նախատեսում է մասնաճյուղի ներքին և արտաքին շահակիցների համար և նպատակ ունի բարձրացնել շահակիցների իրազեկվածությունը մասնաճյուղում իրականացվող կրթության որակի ապահովման գործընթացների վերաբերյալ, ներկայացնել որակի ներքին ապահովման կառուցվածքը, ռազմավարական ծրագրի նպատակների իրականացմանն ուղղված աշխատանքները, որակի ապահովման գործիքները և այլն: Արդեն մշակվել է այդ ձեռնարկի բովանդակության նախնական տարբերակը: Ուրվագծվել է հրատարակվելիք գրքի կառուցվածքը, կատարված է բաժինների ու ենթաբաժինների դասակարգումը, որը դեռևս մշակման, համակարգման կարիք ունի:

11. Բաժինը որակի ներքին ապահովման գործընթացների շրջանակներում պարբերաբար իրականացնում է նաև վերապատրաստման դասընթացներ: Մասնավորապես Ա.Մակարյանը զեկուցում է կարդացել «Ինքնավերլուծության իրականացում. ՈԱԱԿ մոտեցումներ» թեմայով: Պարոն Ա.Մակարյանը կարևորել է այդ դասընթացը, որովհետև դասընթացի նպատակն էր մասնաճյուղի աշխատակիցներին ներկայացնել ինքնավերլուծության իրականացման կարևորությունը բուհում գործող մասնագիտության կրթական ծրագրերի, ուսանողների ուսումնառության որակի բարելավման գործում, զարգացնել մասնակիցների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունները: Դասընթացի ժամանակ քննարկվել են ինքնավերլուծության կազմակերպմանը, փորձագիտական գնահատման մոտեցումներին վերաբերող մի շարք հարցեր, ներկայացվել են ինքնավերլուծության իրականացման քայլերը, տրվել են գործնական խորհուրդներ ինքնավերլուծություն իրականացնողներին:

12. Բաժինը կատարել է 2010-15թթ. գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների /ԳԱՑ/ համալրում և վերլուծություն և կազմել հաշվետվություն:

13. Ամբողջ ուստարվա ընթացքում բաժնի մասնագետների կողմից մասնաճյուղի տարբեր ստորաբաժանումներում (Ոսումնամեթոդական վարչություն, Անձնակազմի կառավարման բաժին, Շրջանավարտների և կարիերայի կենտրոն, մասնաճյուղի կայք) իրականացվել է տեղեկատվական համակարգերի անխափան գործունեության վերահսկում, աշխատանքների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում և նոր առաջարկությունների հիման վրա փոփոխությունների իրականացում, մասնաճյուղի պաշտոնական կայքի կառավարում:

14. Բաժնի աշխատակիցների կողմից մշակվել են բոլոր հարցումների արդյունքների հաշվառման 9 տեղեկատվական համակարգեր՝ բազաներ, որոնց միջոցով կատարվում են իրականացված հարցումների մշակումները և վերլուծությունները: Մասնավորապես բաժինը ֆակուլտետների գործավարների աջակցությամբ իրականացրել է դասավանդման որակի և արդյունավետության ուսանողական հարցման արդյունքների հաշվառում և ԵՊՀ մշակումներից տարբեր համալիր և համեմատական մշակումներ ըստ ամբիոնների, ընդգրկելով 2010-11 ուստարվանից մինչև 2014-15 ուստարվա 1-ին կիսամյակի հարցումների արդյունքները: Դրանց ընդհանրացված արդյունքները կտեղադրվեն կայքում, իսկ մանրամասն վերլուծությունները կուղարկվեն բոլոր ամբիոններ, ֆակուլտետներ: Ակնհայտ է, որ համապատասխան եզրահանգումներ պետք է կատարեն ամբիոնները և կրթական ծրագրերի արդյունավետության ապահովման համար ուշադրություն դարձնեն նաև իրենց կադրային ներուժին:

15. Բաժինն ուսումնասիրել և ըստ չափանիշների դուրս է գրել մասնաճյուղի տարեկան ինքնավերլուծության զեկույցի համար անհրաժեշտ հիմքերը, ստուգել հիմքերի առկայությունը, կազմել բացակայող հիմքերի ցանկը, քննարկել և որոշել այս ուստարում անհապաղ մշակում պահանջող փաստաթղթերը, պարզել այդ փաստաթղթերը մշակող ստորաբաժանումը և նրան տվել անհրաժեշտ

խորհրդատվություն, մատնանշել դրանց իրականացման ժամկետները: Իսկ այժմ բաժինն ըստ պլանի իրականացնում է մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների վերլուծություն՝ չափանիշներին համապատասխան: Այն ընթացքի մեջ է և նախատեսվում է հետագայում դրանց հիման վրա կազմել մասնաճյուղի ինքնավերլուծության զեկույցը:

16. Ընթացքի մեջ է ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպման կարգի մշակման գործընթացը:

ՄԿՈԱ բաժինը ի լրացումն իր կատարած աշխատանքների և ելնելով փաստացի իրականացրած մեծաքանակ տվյալների առաջարկում է.

1. բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին ուշադրություն դարձնել հարցումների արդյունքների վերլուծություններին և անպայման քննարկել ու իրականացնել բարելավման գործընթացներ,
2. կատարված վերլուծությունների հիման վրա կազմել և տպագրել հարցումների արդյունքները լուսաբանող ամենամյա զեկուցում-ձեռնարկ,
3. ուշադրություն դարձնել արտաքին շահակիցների առաջարկներին՝ կախված նոր մասնագիտությունների հետ, այն ունի հետևյալ պատկերը:

Մասնագիտական կրթության և  
որակի ապահովման բաժնի վարիչ

/Ա.Ցուցույան/